

26. 900

ՀՐԱՅԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆԱՏԸՆ-
ՏԵՐՆԵՐԻ 1935 թ. ԳՅՈՒՂՂԱՐԿԻ, ԻՆՔՆԱ-
ՀԱՐԿԻ ՅԵՎ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱ-
ԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ Ա Խ Հ Ֆ Ի Ն Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

ԵՐԵՎԱՆ

1935



Ա. Ա. ՄԱՅԻՆ ԿԱՆ
ԽԱՆԱԿԱՆԻ ԱՎԵՐ

336
2-99
Մ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Կոլտնտեսականների և մենատնտեսների
ու 1935 թ. գյուղաբարկի, ինքնահարկի և կոպա-
ռային ապահովագրության հաշվառման կամ-
պանիայի կիրառման մասին:

1008
36549

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

§ 1. Գյուղաբարկի, լնքնահարկման, կոր-
պարտային ապահովագրության և ջրային տուր-
քի կիրառման համար չըջինքինները
գյուղաբարությունների միջոցով բոկոր գյուղական
վայրերում անց են կացնում որյեկտների հաշ-
վառում (անտեսությունների, անասունների,
շանքսերի աարածությունների, վոչ գյուղա-
տնտեսական ու չուկայի յեկամուտների և
այլն) բոլոր կոլտնտեսականների և մենաւ լն-
տեսների նկատմամբ (ինչպես հարկվողների,
նույնպես և գյուղաբարկից ազատվողների): Բա-
ցի այդ հաշվի յեն առնվում նաև մենատնտես-
ների այն յեկամուտները, վորոնք ստացվում
են գյուղատնտեսական մթերքները չուկայում
վաճառելուց:

Քաղաքներում, քաղաքատիպ վայրերում
և բանվորական ավաններում Փին. բաժին-
ները նույնպես անց են կացնում բոլոր

կոլտնտեսականների և մենատնտեսների ռը-
յեկտների հաշվառում։ Յերեան, Լենինա-
կան և Կիրովական քաղաքներում հաշվառում
չի կատարվում։ Կողմանտեսությունների ռը-
յեկտների հաշվառումը տարբերվում է 1934 թ.
նրանով, վոր ամենուրեք հաշվառումը կատա-
րում են Փինքաժինները, իսկ գյուղիորհուրդ-
ները այդ աշխատանքից ազատված են։

Հաշվառման ժամանակ Փինանսական մար-
մինները առանձին ուշադրություն պետք ե-
ղարձնեն տնտեսությունների, անասունների,
ինչպես և մենատնտեսների չուկայի և վոչ-
դյուղատնտեսական յեկամուտների ճիշտ և
լրիվ հաշվառման վրա։

Ֆինանսական մարմինները միևնույն ժա-
մանակ պետք են նկատի ունենան այն, վո՞ր
ԽՍՀՄ ժողկոմիսորհի և ՀԱՄԿ կ(ր) կ 1935 թ.
ապրիլի 27-ի վորոշման համաձայն հարկային
հաշվառման տվյալները ողտագործվելու յեն
կենդանաբության զարգացման պետական
պլանի կատարումը հսկելու նպատակների հա-
մար։ Այդ հանդամանքը պարտավորեցնում է
Փին։ մարմիններին և գյուղխորհուրդներին
անպայման ապահովել բոլոր տեսակի անասուն-
ների լրիվ հաշվառումը, տանելով վճռական
պայքար թագումների դեմ։

§ 2. Տնտեսությունների 1935 թ. հա-
շվառման առանձնահատկությունը կայանում է
նրանում, վոր Խ.Ս.Հ.Մ. ժողկոմիսորհի 20-նո-
յեմբերի 1934 թ. վորոշմամբ կորտնտեսական-
ների և մենատնտեսների հարկման որյեկտնե-
րը ամենուրեք պետք է հաշվի առնվեն վոչ թե-

շուշաներում, ինչպես այդ կար անցյալ տա-
րի, այլ տնտեսությունների գրքերում։

Երջֆինբաժինները և գյուղխորհուրդները
հաշվառման ժամանակ պարտավոր են ստուգել
յուրաքանչյուր տնտեսության այն տեղեկու-
թյունները, վորոնք գրված են տնտեսության
գրքում (ցանքի տարածությունը, խոտարքնե-
րը, այդիները և այլն)։

Այդ տեղեկությունները ստուգվում են
գյուղխորհուրդում յեղած տվյալներով տնտե-
սությունը հարցաքննելու և տեղում ջոկովի
ստուգում կատարելու միջոցով։

§ 3. Մինչև հաշվառման կամպանիայի
սկսելը շրֆինբաժինները ըջանային ժող-
տնտհաշվառման տեսչությունների հետ միա-
տեղ պարտավոր են հաշվառումը անցկացնելու
համար կազմել աշխատանքների որացուցային
ծրագիր թե առանձին գյուղխորհուրդների և
թե շրջանի համար, ճշորեն ցույց տալով հաշ-
վառման սկսելու և վերջացնելու ժամկետները։

Աշխատանքի ծրագիրը կազմելու ժամանակ
շրջֆինբաժինները և շրջժողտնտհաշվառման
տեսչությունները պարտավոր են ստուգել ա-
ռանձին գյուղխորհուրդների տնտեսություն-
ների հաշվառման գրքերը, և պարզել՝ թե
տնտեսությունների գրքերում հաշվառման ինչ
աշխատանքներ են թերի մնացել և նախատեսնել
աշխատանքի ծրագրի մեջ կայուն ժամկետներ,
վորի ընթացքում այդ աշխատանքները գյուղ-
խորհուրդի կողմից պիտի ավարտվեն։

Հաշվառման աշխատանքի որացուցային

ծրագիրը պետք է հաստատված լինի Շրջդորձ-կոմի կողմից:

§ 4. Շրջֆինբաժինները և շրջողտնտհաշվառման տեսչությունները պարտավոր են մանրազնին Հրահանգել գյուղխորհուրդներին, գյուղհարկային հանձնաժողովներին և Փինակատիվին որյեկտների հաշվառման, գյուղհարկի, ինքնահարկի, ջրային տուրքի և պետապվճարների հաշվարկման կարգի կանոնների մասին:

Հետագայում շրջֆինբաժինները և շրջ-ժողանտհաշվառման տեսչությունները պետք է ապահովեն ոպերատիվ ղեկավարությունը, ամենորյա հոկտորությունը և ոգնությունը գյուղխորհուրդների հաշվառման աշխատանքների ուղղությամբ: Հաշվառման բոլոր նյութերը պետք է յենթարկվեն ամենամանրազնին սառւզման, վորպեսզի վերացված լինեն պետության խարելու, տնտեսությունների քանակի, անասունների և այլ որյեկտների թագ-ցման, հաշվառման արդյունքների նկատմամբ վոչ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու հնարավորությունները:

§ 5. Հաշվառման ամբողջ կամպանիայի ղեկավարությունը շրջաններում, գյուղհարկի կանոնադրության համաձայն, դրվում է շրջանային գործադիր կոմիտեների վրա:

Հաշվառման ընթացքում գյուղխորհուրդներին Հրահանգելու և նրան անմիջական ոգնու-թյուն ցույց տալու, ինչպես և գյուղհարկի և պետապահովագրման հաշվառման որյեկտների ճշությունը ստուգելու համար, շրջֆինբա-

ժինը և ըլջ. ժողոմնորհաշվառման տեսչությունը ապարատից առանձնացնում են անհրաժեշտ թվով աշխատակիցներ:

Հաշվառման աշխատանքը պետք է հանձնարեկ քաղաքականապես ստուգված վատահելի և սոցիալական շինարարության գործին նվիրված աշխատակիցներին: Հաշվառմը կատարող աշխատակիցների ուշադրությունը պետք է որել այն բանի վրա, վոր կուտանոսեսականների և մենատնտեսների հաշվառման ծրագրով նախատեսված բոլոր որյեկտները և յեկամուտի աղբյուրները հայտնարերվեն և հաշվի առնվեն լրիվ չափով:

Տնտեսությունները, անասունները և այլ որյեկտների թագցնելու, սխալ տեղեկություններ առաջ, յուրաքանչյուր ղեպքին պետք է մոտենալ վորպես պետության խարելու ուղղակի փաստի և այդ բանում մեղագոր անձինք պետք է տրվեն դարտի:

§ 6. Գյուղխորհուրդի տերթիտորիայի սահմաններում հարկման ու ապահովագրման որյեկտների հաշվառում անցկացնելու պատասխանատվությունը դրվում է շրջֆինբաժինների և գյուղխորհուրդների վրա:

Կոլտնտեսականների և մենատնտեսների անասունների հաշվառումը, կոլտնտեսականների չկոռպերացված տնայնա-արհեստագործական զբաղմունքների առկայությունը, մենատնտեսների վոչ գյուղատնտեսական և շուկայի յեկամուտների չափը և այլ տվյալների հայտնաբերումը, վոր պահանջում և տնատերերի հարցաքննություն, գյուղխորհուրդները

կատարում են գյուղհարկհանձնաժողովների
միջնորդ:

§ 7. Հողի բոլոր տարածությունները
(ցանք, խոտհարք, այգի և այլն) հաշվի յեն
առնվում հեկտարներով: Հեկտարների մասերը
չուց են տրվում տասնորդական կոտորակնե-
րով 0,01 ճշտությամբ:

ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ- ՆԵՐԸ

§ 8. Հաշվառումից առաջ պետք է կատար-
վի մասսայական-բացատրական աշխատանք
տնտեսությունների, անասունների և այլ որ-
յեկտների ճիշտ և լրիվ հաշվառման նշանակու-
թյունը, ինչպես և թերհաշվառման կամ հաշ-
վառումից թագցնելով պատասխանատվությու-
նը բացատրելու նպատակով:

Մասսայական աշխատանքը կատարվում է
տեղական խորհուրդների ղեկավարությամբ
հետևյալ կերպով՝

§ 9. Նախքան հաշվառումը սկսելը, գյուղ-
խորհուրդները պարտավոր են հրավիրել հա-
մայնքի ընդհանուր կամ թաղամասերի ժողով-
ներ, վորտեղ՝

1) Պետք է ծանոթացնել գյուղհարկի, պե-
տապահովագրության որենքների, անասուն-
ների և այլ հարկվող որյեկտների հաշվառման
կարգի հետ:

2) Մանրամասն բացատրել, վոր որյեկտ-
ների թագցնումը, անասունների, վոչ գյուղա-
տնտեսական յեկամուսների ծածկելը համար-

վում և պետության խարելով փաստ և մեղա-
վորները յենթարկվում են դատական պատաս-
խանատվության, կամ վարչական կարգով տու-
ղանքի, բացի դրանից, այդպիսի դեպքերում
չի վճարվելու ապահովագրման վարձատրու-
թյունը:

ՀԱՐՑԱՔՆՆՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 10. Բնակչության, անասունների և
գյուղհարկի ու պետապահովագրության հարկ-
ման բոլոր որյեկտների հաշվառման համար
գյուղխորհուրդները հարկացին հանձնաժողով-
ների ողնությամբ կատարում են տվյալ գյու-
ղի բոլոր տնտեսությունների հարցաքննու-
թյունն: Աշխատանքներին մասնակից են դարձ-
վում գյուղխորհուրդի ֆինսեկցիայի անդամները
և ֆին. ակտիվիստները:

Մեծ, մանավանդ ցրված գյուղերում խոր-
հուրդները հարցաքննությունը պետք է կատա-
րեն ըստ առանձին թաղամասերի, ամրացնելով
յուրաքանչյուր առանձին թաղամասային հա-
տուկ հանձնաժողով, վորը առանձնացվում է
գյուղխորհուրդի կողմից հարցաքննության
համար: Թաղամասային հարցաքննող հանձ-
նաժողովի կազմը պետք է բաղկացած լինի
առնվազն 3 հոգուց:

Հաշվառումը սկսելուց առաջ բոլոր տնտ-
երերը պետք է նախազգուշացված լինեն հար-
ցաքննությունը կատարելու ժամանակի մասին:

§ 11. Գյուղհարկի և պետապահովագրու-
թյան որյեկտների հաշվառման հարցաքննու-

թյան ժամանակ ցուցմունքները տալիս ե տընտեսության գլխավորը, իսկ նրա ժամանակավոր բացակայության, կամ հիվանդ լինելու դեպքում, տնտեսության չափահաս անդամը։ Անշափահասների ցուցմունքների հիման վրա տնտեսության գրքում տեղեկություններ լրացնելը արգելվում է։

Հարցաքննությունը վերջացնելուց հետո տնատերը պետք է տնտեսության գրքում ստորագրի իր ցուցմունքների համարթյան մասին։

§ 12. Տնատիրոջ հարցաքննության ժամանակ, հարկային հանձնաժողովը տնտեսությունների գրքերում յեղած տեղեկությունները համեմատում ե անցյալ տարիա տվյալների, անսառւնների հունվարյան հաշվառման և ձերի պասպորտիզացիայի նյութերի, ինչպես և տնտեսության տրված աշխանացանի և դարնանացանի պլանների հետ։

Այն զեպքերում, յերբ գյուղհարկային հանձնաժողովները կգտնեն անատիրոջ տըված տեղեկություններն անբավարար, անմիջապես պետք է կատարեն հարկման և պետապահովագրության որյեկտների փաստացի ստուգում և թագցրած որյեկտները հայտնաբերելու գեպքում, կազմեն արձանագրություն մեղավորներին պատասխանառվության յենթարկելու համար, չոպտությունը միշտ հաշվառման վերջը։

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 13. Յուրաքանչյուր հաշվի առվող տընտեսություն հաշվառման պահին պետք է գը-

րանցված լինի տնտեսության գրքում։ Մեկ տնտեսություն (ընտանիք) պետք է համարել միատեղ ապրող աղջականներին, վորոնք վարում են ընդհանուր տնտեսություն։ Միայնակները համարվում են առանձին, ինքնուրույն տնտեսություններ։

Կողմանականները գրվում են ձեւ 2 ա., գրքում։

Գյուղհարկ վճարող մենատնտեսները գըրվում են ձեւ 2 ր. տնտեսության գրքում։

Արհեստագործական կոլտնտեսությունների այն անդամները՝ վորոնք ունեն դաշտային հողամաս, բանող անասուններ և հարկվերու յեն գյուղհարկով վորպես մենատնտեսներ, պետք է գրին համար 2 ր. մենատնտեսների գրքում։

Արհեստագործական կոլտնտեսությունների այն անդամները, վորոնք հարկվում են գյուղհարկով իբրև կոլտնտեսականներ, գըրվում են ձեւ № 2 ա. գրքում։

§ 14. Գյուղխորհրդի տերիտորիայում գտնվող բոլոր տնտեսությունները պետք ե հաշվի առնվեն, անկախ նրանից, ունեն նրանք գյուղատնտեսություն թե վոչ, կամ յենթարկվում են գյուղհարկի թե վոչ։

Այդպիսով տնտեսությունների գրքում պետք է գրանցվեն գյուղխորհրդի տերիտորիայում գտնվող բոլոր բանվորների, ծառայողների, տնայնագործների և դրախց ստացվող միջոցներով ապրող անձանց տնտեսությունները։ Բացի դրանից տնտեսության գըր-

քում պետք է գրանցվեն յերկաթուղու, ջրային, խճուղային և գրունտային տրանսպորտի գծային այն աշխատողների տնտեսությունները, վորոնք բնակվում են տրանսպորտին հատկացված հողամասերում և գտնվում են տվյալ գյուղաբնորչուրդի սահմաններում:

Մանրազնին պիտի ստուգել, բաց չեն թողնը ված արդյոք տնտեսություններ, մանականդ առանձին կետերում, (ագարակներում, անտոռային պահակատեղերում, յերկաթգծի տնտեղերում և այլն):

Յեթե մեկ տան մեջ ապրում են յերկու և ավելի ընտանիքներ, վորոնք վարում են ինքնուրույն տնտեսություն, այդ դեպքում դրանցից յուրաքանչյուրը հաջի յե առվում, վորպես առանձին տնտեսություն:

§ 15. Գյուղաբնորչուրդը պետք է հաշվի առնի բոյոր կոլտնտեսականներին, անկախ նրանից, թե այդ տնտեսությունները ունեն չհանրայնացված յեկամուտներ, ցանք, անտուն և այլն, թե վոչ:

§ 16. Հաշվառման պահին ժամանակավորապես բացակայող տնտեսությունները անպայման պետք է հաշվի առնվեն և գրվեն տընտեսության գրքում և դրանց հարկերի և տուրքերի հաշվարկը պետք է կատարվի ընդհանուր հիմունքներով:

Յուրաքանչյուր բացակայող տնտեսության նկատմամբ գյուղինորչուրդը պարտավոր է կատարել մանրազնին քննություն և պարզել, թե այդ տնտեսությունը գտնվում է ժամանա-

կավոր բացակայության մեջ, թե նա տեղափոխվել է նոր մշտական բնակավայր:

Գյուղինորչուրդի սահմաններից դուրս յեկած և նոր մշտական բնակավայր ամբողջ ընտանիքով տեղափոխված տնտեսությունների ցուցակը, մանրազնին ստուգվում և հաստատվում են գյուղինորչուրդի պլենումի կողմից: Գյուղինորչուրդը այդ ցուցակները ուղարկում են չրջինբաժնին, ցույց տալով յուրաքանչյուր տնտեսության բացակայության պատճառները, ժամանակը և այն տեղը, վորտեղ տեղափոխվել ե տնտեսությունը:

Ժամանակավոր բացակայող տնտեսությունների վճարումների հաշվարկը գյուղինորչուրդը կատարում է ցանքի պլանի տարածության, տնտեսության 1934 թ. ընթացքում ստացված վոչ գյուղատնտեսական յեկամունքների և տնտեսության ունեցած այլ հարկվողությունների հիման վրա: Յեթե ժամանակավոր հեռացած տնտեսությունների հասցեները հայտնի յեն, ապա նրանց անմիջապես պետք է ուղարկել վճարման ծանուցագրեր:

§ 17. Հաշվառմանից բայց վոչ ուշ 1936 թ. հունվարի 1-ից հետո տվյալ գյուղը յեկած նոր տնտեսությունը պետք է հաշվի առվի և յենթարկվի գյուղհարկի, յեթե նա իր նախկին բնակավայրում հարկված չի յեղել: Այդպիսի տնտեսության գյուղհարկը հաշվարկվում է նրա ունեցած բոլոր հարկվող որյեկտների հիման վրա:

§ 18. Անասնապահական չրջաններում, հաշվառման ժամանակ գյուղինորչուրդի սահ-

մաններից ժամանակավոր իրենց հոտերով բացակայող քոչվոր անտեսությունները հաշվի են առնվում իրենց հիմնական բնակավայրում, կամ թե հաշվառման պահին գտնվելու վայրում:

§ 19. Հաշվառված յուրաքանչյուր տընտեսության համար գյուղխորհուրդը գրքում հատկացնում է առանձին №-, գյուղխորհուրդի կողմից միացվող տնտեսությունների ցուցակի հիման վրա (ձև № 4): Այդ ցուցակը պետք է կազմված լինի նախքան հաշվառման սկսելը:

Զայնազուրկների նկատմամբ տնտեսության գրքի յերկրորդ տողում «Սոցիալական գրությունը» գյուղխորհուրդը պետք է ցույց տա ձայնազրկության հիմքը «ձայնազրկված և դատարանի կողմից». «ձայնազրկված և ինչպես նախկին առեւրական» և այլն:

§ 20. Տնտեսության գրքի «տնտեսության ընտանիքի անդամների ցուցակ» բաժնում գյուղխորհուրդը գրում է տվյալ տնտեսության անխոտիր բոլոր անդամներին՝ թե մշտական աղբողջ և թե ժամանակավորապես բացակայողներին (այսինքն տնտեսությունից դուրս ապրողներին):

Ժամանակավորապես բացակայող չնչերի թվի մեջ հաշվի են առնվում կարմիր Բանակ կանչվածները, սովորողները և այլ անձինք, վորոնք չեն կտրել իրենց կապը տվյալ տնտեսության հետ:

Տնտեսության գրքի 4-րդ սյունյակում կատարվում է նշում «Աշխատանքի հերոս» 1-ին կարգի աշխատանքի հաշմանդամ և այլն:

6-րդ սյունյակում (զբաղմունքը կամ աշխատանքի վայրը) անպայման ցույց է տրվում տնտեսության վոչ գյուղատնտեսական զբաղմունքը, որինակ, «բանվոր», «ատաղծագործ», «կոշկակար», «հյուսն», կամ թե «ուղղակներ և պատրաստում և վաճառում»: «զամբյուղներ և գործում և վաճառում» և այլն: Տընտեսագործության զբաղմունքների առկայության գեպքում անպայման նշվում և «կոռպերացված և» կամ «չի կոռպերացված»:

ՅԱՆՔԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 21. Գյուղհարկի հաշվառման ժամանակ գյուղխորհուրդը պետք է հետեւ, վորպեսզի կոլտնտեսականների գրքում ցանքերի տարածությունները գրանցվեն տնտեսության գրքի 11-րդ բաժնում, իսկ մենատնտեսներինը, վերջնների գրքի 12-րդ բաժնում:

Այդ բաժնների համապատասխան տողերում գյուղխորհուրդը գրում է առանձին մշտակույթների անունները:

§ 22. Տնտեսության գրքում զբաղում է հատիկային և բակլային մշակույթների կարտուֆիլի և արևածաղկի այն տարածությունները, վորոնց հիման վրա սահմանված են տրվյալ տնտեսության պարտավորությունը պետության հանդեպ այդ մշակույթների նկատմամբ:

Հատիկային բակլային մշակույթներ են համարվում ցորենը, գարին, յեկիալտացորենը, կորեկը, վարսակը, հաճառը, տարեկանը, վոս-

պը, լորին, մաշը, սիսեռը և վիկայի ցանքսերը
սերմի համար:

§ 23. Մենատնտեսների պլանից ավել կա-
տարված ցանքը հարկելու համար, գյուղխոր-
հուրդը տնտեսության գրքում պետք է գրի
փաստացի կատարված ցանքի տարածու-
թյունը: Այդ տեղեկությունը արտադրվում և
մենատնտեսների ցանքի յեզրափակիչ հաշվառ-
ման տեղեկագրից գյուղխորհութիւն: № 27 ր.
հաշվառման ձևից:

§ 24. Այն գեպքերում, յերբ կոլտնտեսա-
կանների մերձ ագարակային ցանքերի համար
պլանային առաջադրանք չի սահմանված,
գյուղխորհուրդը այդ տնտեսությունների նը-
կատմամբ հաշվի յե առնում փաստացի կա-
տարված ցանքը, պետք արումների հաշվարկի
համար:

ԱՅԳԻՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՇ-
ՎԱՐՈՒԽԸ

§ 25. Պաղատու այգիները ինչպես և
բազմամյա այլ տնկարանները (խաղողի այգի-
ներ, թթանոցներ և այլն) պետք է հաշվի տու-
նել անկախ նրանից՝ զբաղեցնում են նրանք ամ-
բողջ տարածությունը, թե պտղատու ծառերը
ցրված են միջնակներում, առուների ափերում:
և այլն:

Գյուղհարկի և պետապահովագրման հաշ-
վարկի համար գյուղխորհուրդը հաշվի յե
առնում միայն պտղաբեր տարածությունը:
Յեթե տնտեսությունը ունի չառանձնաց-

ված ցրված այգի, վորակել ծառերը չափագանց
նոսր են, գյուղխորհուրդը հաշվի պետք է առ-
նի պտղաբեր ծառերի քանակը և ծառերի քա-
նակը վերածի հեկտարի:

Ծառերի քանակը հեկտարների վերածե-
լու նորմաները սահմանվում են շրջգործկոմի
կողմից:

Որինակ՝ յենթագրենք, վոր տվյալ շրջա-
նում կորիգավոր պտղատու ծառերի (ինձոր,
տանձ և այլն) համար սահմանված են միջին
նորման 0,01 հեկտար տարածություն մեկ ծա-
ռի համար: Տնտեսությունում ընդամենը հաշ-
վառված է 25 այգինի ծառեր: Վորպեսզի
վորոշել այդ ծառերով բոնված տարածու-
թյունը, պետք է 0,01-ը բազմապատկել 25-ի
վրա և ստացվածը գրել տնտեսության դրառում:
 $0,01 \times 25 = 0,25$ հեկտար.

Յուրաքանչյուր հատուկ մշակույթը (պըտ-
ղատու այգին, խաղողի այգին և այլն), գյուղ-
խորհուրդը անպայման գրում է տնտեսության
գրքում յուրաքանչյուրի համար հատկացնելով
տուանձին սյունյակ:

Յեթե պտղատու այգու թումբերի և միջ-
նակների վրա ցանքած են բանջարանոցային և
բոստանի մշակույթները, տնտեսության գըր-
քում այգու տարածությունը ցույց է տրվում
տուանձին, իսկ ցանքով բոնված տարածու-
թյունը տուանձին:

ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐՈՒԽԸ

§ 26. Վորպես խոտհարքներ հաշվի յեն



առվում բոլոր այն տարածությունները, վորոնք հատկացված են խոտհարքի համար:

Հողի այն տարածությունը, վորը ծածկված է թփուտներով կամ անտառով և "գտագործվում" ե իբրև խոտհարք, հաշվի յե առնդվում վոչ թե լրիվ չափով, այլ վաստորեն հնձվող տարածության համեմատ:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 27. Կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսության գրքերում գյուղիորհուրդները հաշվի յեն առնում առանց բացառության թե գյուղհարկով հարկվող և թե չհարկվող բոլոր անասունները ըստ տեսակների և հաստիների:

Ժամանակվոր բացակայող անասունները (ամառային արոտավայրերը քշված, ձիյերը և բանով անասունները փոխադրական աշխատանքներում) նույնպես պետք է հաշվի առնվիճ և գրիեն տնտեսության գրքում:

§ 28. Անասունների քանակը վորոշվում և առ հաշվառում կատարելու որը: Անասունների հասակը վորոշվում և առ 1 մայիսի 1935 թ. Այդ ժամանակից հետո ծնված մատղաների հասակը վորոշվում և առ հաշվառման որը:

§ 29. Գյուղխորհուրդը պարտավոր է հատուկ ուշադրություն դարձնել յերիտասարդ անասունների հաշվառման վրա, յեթե տնտեսությունում կան կովեր, վոչխարներ և մեծահասակ խոզեր, իսկ հարցաքննման ժամանակ մատղաներ, տնտեսատերը ցույց չի տալիս,

այդ դեպքում տնտեսության ցուցմունքները պետք ե յենթարկվեն մանրազնին ստուգման:

§ 30. Յեթե հաշվառման պահին հանրայնացված անասունները ժամանակավորապես գտնվում են կոլտնտեսականների մոտ, ապա այդ անասունները պետք է գրվեն կոլտնտեսության վրա, իսկ կոլտնտեսականի տնտեսության գրքում հաշվի չպետք ե առվեն:

§ 31. Անասուններ չունեցող տնտեսությունների նկատմամբ գյուղխորհուրդը տնտեսության գրքում կատարում է նշում «անասուն չունի»:

ՇՈՒԿԱՅԻ ՅԵՎ ՎՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 32. Մենատնտեսների տնտեսություններում չուկայի և վոչ գյուղատնտեսական յեկամուտների հաշվառումը, գյուղխորհուրդը կատարում է բնակչության ցանքի, անասունների և այլ որյեկտների հաշվառման հետ միաժամանակ:

Շուկայի և վոչ գյուղատնտեսական յեկամուտները հաշվի յեն առնվում հատուկ ցուցակներում (ձևեր № № 2/4 և 2/5):

Գյուղխորհուրդը այդ ցուցակները ուղարկում են շրջարկային հանձնաժողովին ի հաստատություն: Վոչ գյուղատնտեսական յեկամուտները ճիշտ վորոշելու նպատակով, շրջֆինքաժինները և գյուղխորհուրդները պարտավոր են տեղեկություններ հավաքել պետական և կոռուպերատիվ կազմակերպություններից

մենատնտեսների առանձին տնտեսություններին վճարված գումարների մասին (դրամով կամ բնամթերքով):

§ 33. Կոլտնտեսականների տնտեսությունների նկատմամբ, վորոնք ունեն վոչ կոռակերացված արհեստներից յեկամուտներ, տնտեսության գրքի 6-րդ բաժնի 4-րդ սյունյակում կատարվում է նշում զբաղմունքի մասին: Ընդվորում նշումը կատարվում է միայն զբաղմունքի տեսակի «առաղծադործ»: «Հյուն»: «վարսավեր» և այլի մասին, իսկ յեկամուտի չափը չի տրվում:

ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՐՔԻ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

§ 34. Կուլակային տնտեսությունները հաշվի յեն առվում նույն տնտեսության գրքում, վորոնք սահմանված են աշխատավոր մենատնտեսների համար, ընդվորովմ «սոցիալական դրսությունը» տողում գրվում են «կուլակ»:

Տնտեսության գրքի ցանքի, անասունների, խոտհարքների և այլն բաժինը լրացվում է նույն կարգով և պահպանվում են նույն կանոնները, վորոնք սահմանված են աշխատավոր մենատնտեսների համար:

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

§ 35. Կոլտնտեսականների և մենատնտեսների հաշվառումը ավարտելուց հետո գյուղխորհուրդը պարտավոր է մանրազնին ստուգել հաշվառման ճշտությունը: Ստուգումը

պետք է պարզի՝ թե արդյոք հաշվառումից դուրս չեն մնացել տնտեսություններ, անտուումններ, ճիշտ են հաշվի առված չուկայի և վոչ գյուղտանտեսական յեկամուտները, ցանքը և այլ յեկամուտների աղբյուրները:

Ամենից առաջ գյուղխորհուրդը յուրաքանչյուր առանձին տնտեսության որյեկտների հաշվառման արդյունքները համեմատում են 1934 թ. գյուղհարկի հաշվառման և 1935 թ. կուլտուրքի տվյալների հետ:

Բացի դրանից հաշվառված անասունների քանակը գյուղխորհուրդը համեմատում է 1935թ. անասունների հունվարյան ցուցակագրման հետ:

Եթե ստուգման ժամանակ հայտնաբերվի, վոր մնտեսություն է բաց թողած կամ տեղի յեռնեցել որյեկտների թերհաշվառում, գյուղխորհուրդը պետք է անմիջապես հաշվի առնի բաց թողած տնտեսությունը և հաշվառման որյեկտներում մտցնի անհրաժեշտ ուղղումներ:

§ 36. Այդպիսի նախնական ստուգումից հետո հաշվառման արդյունքները քննության են առնվում գյուղխորհուրդի պլենումում ակտիվի մասնակցությամբ: Այդ ժողովներում հայտարարվում են յուրաքանչյուր առանձին տնտեսության հաշվառման արդյունքները և քննվում են հաշվառման ճիշտ և լրիվ լինելը: Գյուղխորհուրդը ստուգում է քննության ժամանակ հայտարարված դիտողությունները և անհրաժեշտ փոփոխություններ և մտցնում տնտեսությունների գրքում:

§ 37. Հաշվառման արդյունքների այլպիսի նախնական ստուգումից հետո, գյուղական հողագործության մեջ ըրջին բաժինների անմիջական ողնությամբ յուրաքանչյուր առանձին գյուղում, անասունների քանակի ու այլ ոբյեկտների հաշվառման ճշտությունը պարզելու համար, անցեն կացվում կոնտրոլ ստուգում, տնտեսությունները ըրջագայելու և անապահությունների փառացի քանակը (բնականույթ) հաշվելու միջոցով:

Կոնտրոլ ստուգումն անց է կացվում ստուգով բրիգադան, վորը մանրազնին կերպով նախապես հրահանգվում և Փինբաժինների կողմից:

Կոնտրոլ ըրջագայությունը պետք է անցկացնել հաշվառման արդյունքները գյուղի խորհրդի պլենումում ակտիվի հետ միասին քննություն առնելուց անմիջապես հետո (§ 36):

Գյուղիսորհուրդի բրիգադային պետք է հանձնվի նշանակված այն տնտեսությունների ցուցակները, վորոնք յենթակա յեն ստուգման:

Ստուգով բրիգադան ըրջագայության ժամանակ հայտնաբերած փոփոխությունները պետք է նշանակի այդ ցուցակներում:

§ 38. Յուրաքանչյուր տնտեսության այցելումի ժամանակ, բրիգադան պարզում և անասունների քանակը, տնտեսությունում փառացի ստուգում կատարելու միջոցով: Բացի դրանից բրիգադան տնտեսիբո՞յլ և հարեվաններին հարցաքննելու միջոցով պարզում է տընտեսությունից բացակայող անասունների քա-

նակը (արտատեղեր քշվածների, փոխադրության մեջ յեղածների քանակը և այլն):

Ստուգման ժամանակ բրիգադան հատուկ ու շագրություն պետք է դարձնի մանր անասունների (վոչխարներ, խոզեր և մատղաշներ) քանակի ճիշտ հաշվառման վրա, նկատի ունենալով, վոր այդ անասունները թագցնելը ավելի հեշտ է: Բացի դրանից բրիգադան պետք է ստուգի հասակների ճշտությունը:

Անասունների հաշվառման ճշտությունը ստուգելու հետ միաժամանակ բրիգադան պետք է ստուգի նաև մյուս որյեկտների հաշվառման ճշտությունը (ցանքերի այգիների, խոտհարքների տարածությունը և այլն):

§ 39. Կոնտրոլ ստուգման ժամանակ յեթե կողարզվի, վոր տեղի յեւնեցել մեծ շափով անասունների և մյուս որյեկտների թերհաշվառում, գյուղաբուժուրդը պարտավոր է նշանակել համատարած վերահաշվառում:

Յուրաքանչյուր առանձին տնտեսության նկատմամբ, վորոնց մյուս կհայտնաբերվի անասունների և այլ ոբյեկտների թագցման փառաբեր, գյուղիսորհուրդը կազմում է ակտ մեղամբուներին քրիական պատասխանատվության յենթարկելու համար: Այդ ակտերը գյուղիսորհուրդի կողմից անմիջապես ուղարկվում են ըրջանային դատախազին:

§ 40. Կոնտրոլ ստուգման կամ վերահաշվառման ընթացքում հայտնաբերված բոլոր տեսակի ուղղումները հաշվառման մեջ գրանցվում են տնտեսությունից բացակայող:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՈՒԻՆՆԵՐԻ ՀԱՇ-
ՎԱՌՄԱՆ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ
ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

§ 41. Հաշվառումը ավարտելուց և բոլոր
սոսուղողական (կոնտրուլ չքաղաքայության,
գյուղխորհուրդի պենումում հաշվառման ար-
դյունքների քննության, կարիք յեղած դեղքե-
րում կը կնակի հաշվառում կատարելու) աշ-
խատանքները վերջացնելուց հետո գյուղխոր-
հութը յուրաքանչյուր կոլտնտեսականի և մե-
նատնտեսի տնտեսության անասունների քանա-
կի և բնակչության հաշվառման տվյալները,
փոխանցում և «բնակչության և անասունների
ոժանդակ գումարային ցուցակ»-ը գյուղ-
խորհուրդի հաշվառման ձև № 2/1 և հանձնում
է շրջփինբաժնին: Այդ ցուցակները կազմվում
են տնտեսությունների հետեւյալ խմբերի հա-
մար: 1) Կոլտնտեսականների, 2) աշխատավոր-
մենատնտեսների, 3) կուլակների, 4) վոչ գյու-
ղատնտեսական բնակչության (բանվորներ,
ծառայողներ, անայնագործներ և այլ անձինք,
վորոնք գյուղատնտեսություն չունեն, ինչպես
նաև գյուղհարկով չհարկվող այն բանվոր ծա-
ռայողների, վորոնք ունեն ոժանդակ գյուղա-
կան տնտեսություն):

Յեթե գյուղխորհուրդի կազմի մեջ մըտ-
նում են միքանի գյուղեր, այդ գեղքում յու-
րաքանչյուր առանձին գյուղի համար կազմ-
վում են առանձին ցուցակ:

Այն շրջաններում, վորտեղ կան միատեղ
հող ողտագործող կամ միատեղ անասուններ ա-

բածացնող ընկերություններ (ՏՕՅ-ն), այդ ըն-
կերությունների անդամների ցուցակները
կազմվում են արտելների անդամների ցուցակ-
ներից առանձին:

Շրջփինբաժները 2 որվա ընթացքում
պետք է մանրազննին ստուգեն գյուղխորհուր-
դից ստացված նյութերը, հաշվառումը լիկ
և ճիշտ լինելու տեսանկյունով, համեմատելով
այդ նյութերը 1934 թ. գյուղհարկի հաշվառ-
ման և 1935 թ. կուլտառությի և այլ ստուգիչ
տվյալների հետ: Յեթե հայտնաբերվեն ան-
հիմն տարրերություններ հաշվառման տվյալ-
ները կոնտրուլ նյութերի հետ համեմատելու
ժամանակ, Փինբաժնինը պարտավոր և տեղում
ստուգել ցուցակների ճշտությունը:

Հաշվառման ցուցակները ստուգելուց հե-
տո շրջփինբաժնը անասունների հաշվառման
ցուցակները հանձնում է շրջողադիացիան-
ման տեսչությանը:

Կոլտնտեսականների և մենատնտեսների
բնակչության և անասունների հաշվառման
տվյալների վերաբերյալ հետագայում մտց-
ված փոփոխությունների, հայտնաբերումների
մասին Փինբաժնինը պարտավոր և հայտնել
շրջողադիացիան հաշվառման տեսչությանը:

ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ՅԵՎ
ԻՆՔՆԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԸ.

§ 42. Կոլտնտեսականների գյուղհարկի և
ինքնահարկի հաշվարկը կատարում են գյուղ-
խորհուրդները Փինբաժնի անմիջական ողնու-

թյամբ։ Ֆինստաժինը պարտավոր ե մանրազըն-նին ստուգել կոլտնտեսականների գյուղհարկի հաշվարկման ճշտությունը և ապահովել որենքով սահմանված բոլոր արտոնությունների կի-րառումը։

§ 43. Բատ ԿԺԾՎ Վարչության արված հաշվառման հրահանդի՝ կոլտնտեսականների գյուղհարկի հաշվարկը պետք ե կատարվի տնտեսությունների հաշվառման դրբի (ՃՀ № 2 ա.) 12-րդ հատվածում։

Բայց տնտեսության գրքերում չնշումներից խուսափելու նպատակով, գյուղխորհուրդները կարող են գյուղհարկի և ինքնաշարկի հաշվարկը կատարել ոժանդակ ցուցակներում (ՃՀ № 2/2 ա.), վորոնք միևնույն ժամանակ ոգտագործում են արդյունքներն ընդգումարելու և ըստ գյուղխորհուրդի տեղեկագրերի կազմելու համար։ ՃՀ № 2/2 ա. ցուցակներում կատարված հաշվառման արդյունքները անմիջապես տեղափոխվում ե տնտեսության գրքի 12-րդ հատվածի մեջ։

§ 44. Ոժանդակ ցուցակներում կոլտնտեսականները բաժանվում են հետեւյալ հինգ խըմբակների՝

Առաջին խմբակ՝ կոլտնտեսականների տնտեսություններ, վորոնք չունեն վոչ տնամերձ ցանքեր, վոչ այգիներ, վոչ անապուններ, և վոչ ել գյուղհարկի յենթակա այլ որյեկտներ և միևնույն ժամանակ չունեն վարձու աշխատանքից և վոչ հանրայնացված տնայնա-արհեստավորական կամ այլ վոչ գյուղատնտեսական գրաղմունքներից յեկամուներ։

Յերկրորդ խմբակ՝ կոլտնտեսականների տնտեսություններ, վորոնք ունեն չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ, բայց այդ յեկամուտները գյուղհարկով չեն հարկվում (անասուններ, աշխատավարձ, կոռպերացված տնայնա-արհեստավորական գրաղմունք)։

Առաջին և յերկրորդ խմբակների կոլտնտեսականների տնտեսությունները գյուղհարկով չեն հարկվում։

Դրանց ցուցակները կազմելու ժամանակ տնտեսության գրքից ոժանդակ ցուցակների մեջ արտադրվում են անունը, ազգանունը, հայրանունը և տնտեսության անդամների թվի մասին տեղեկություններ։

Յերրորդ խմբակին պատկանում են այն բանվոր-ծառայող կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնք ունեն չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ-տնամերձ ցանք, այդի և այլն, բայց սիստեմատիկորեն չեն աշխատում կոլտնտեսությունում և այդ պատճառով գյուղհարկի որենքի 33-րդ հոդ. կարգով ազատվում են հարկումից։

Չորրորդ խմբակի կոլտնտեսականների տնտեսությունները, վորոնք ունեն հարկում չհանրայնացված յեկամուտի աղբյուրներ, սակայն չունեն չկոռպերացված տնայնա-արհեստավորական գրաղմունքների յեկամուտներ, տնամերձ ցանք, այդի և այլն)։

Հինգերորդ խմբի մեջ հաշվում են այն կոլտնտեսականները, վորոնք չհանրայնացված գյուղատնտեսության յեկամուտների հետ միաժամանակ ունեն վոչ կոռպերացված տնայնա-

արհեստավորական զբաղմունք, վորի համար հարկվում են կայուն դրույքով և հավելումով:

Գյուղխորհուրդը նշանակում է տնտեսության գրքի «խմբակը գյուղհարկի» տողում կոլտնտեսականների խմբակները և այդ նույնը ցույց է տալիս նաև ոժանդակ ցուցակներում:

Հարկման արդյունքների ընդգումարումները տրվում են ըստ խմբակների:

§ 45. Վոչ կոռապերացված տնայնա-արհեստավորական զբաղմունքից յեկամուտներ ունեցող կոլտնտեսականները, վորոնք հարկվում են տոկոսային հավելումով անաշխատումակների համար սահմանված զեղջը ստանում են հարկի ընդհանուր գումարից:

Այլ արտոնությունների կարգով զեղջերը տրվում են անաշխատումակության համար զեղջը կիրառելուց հետո մնացած հարկի գումարից:

Կոլտնտեսականների այն տնտեսությունները, վորոնք չունեն մշտական յեկամուտներ վոչ կոռապերացված տնայնա-արհեստավորական զբաղմունքներից հարկվում են առանց տոկոսային հավելման, հարկի կայուն դրույքը դրվում է 2 անգամ. 4-րդ սյունյակում («գյուղհարկի դրույք») և 18-րդ հաշվարկված եմինչեւ զեղջը) սյունյակներում:

Յեթե տնտեսությունը լրիվ ազատված է հարկից արտոնության կարգով, անկախ դրանից «հաշվարկված» տողը գյուղհարկի նկատմամբ պետք է լրացնել:

§ 46. Այն շրջաններում վորտեղ կիրառ-

վում և ջրային տուրք կողմանտեսականների ցուցակներում, առանձին ցույց է տրվում ջրովի և անջրտի ցանքերը և տնկարանները: Բացի դրանից ցույց է տրվում նաև 1) հաշվարկված ջրային տուրքը ըստ առանձին մշակույթների և հաշվարկի ընդհանուր գումարը, 2) զեղջ արտոնությունների կարգով, 3) յենթակա յեղձարձան, 4) նախկին տարիների ապառքը:

ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ՅԵՎ ԻՆՔ-ՆԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ

§ 47. Աշխատավոր մենատնտեսների գյուղհարկի և ինքնաշարկի հաշվարկը բոլոր զեղջերում անպայման կատարվում է հատուկ ոժանդակ ցուցակներում (ձև № 2/2 բ.) Հաշվարկը վերջացնելուց հետո արդյունքները տեղափոխվում են մենատնտեսների տնտեսության գրքի 13-րդ բաժինը:

Ծրջֆինբաժինները պարտավոր են ապահովել մենատնտեսների յեկամուտների գյուղհարկի և ինքնաշարկի ճիշտ և ժամանակին հաշվարկումը: Անհրաժեշտ զեղջերում այդ աշխատանքը պետք է կատարի մասսայական վճարումների տեսուչը գյուղխորհրդի քարտուղարի և հաշվարկահի հետ միատեղ:

§ 48. Մենատնտեսները ոժանդակ ցուցակներում ստորագրածանվում են հետեւյալ առանձին խմբերի:

1. Գյուղհարկի յենթակա չուկայի և վոչ գյուղատնտեսական յեկամուտներ չունեցողներ.

2. Շուկայի յեկամուտներ ունեցողներ, սակայն գյուղհարկի յենթակա վոչ գյուղատնտեսական յեկամուտներ չունեցողներ:

3. Գյուղհարկի յենթակա վոչ գյուղատնտեսական յեկամուտներ ունեցողներ, վոռնք չունեն շուկայի յեկամուտներ:

4. Գյուղհարկի յենթակա շուկայի և վոչ գյուղատնտեսական յեկամուտներ ունեցողներ:

5. Կրկնակի չափով հարկվողներ (որենքի 67 և 103 հոդ. կարգով):

6. Անհատական կարգով հարկվողներ:

7. Հարկման յենթակա յեկամուտի աղբյուրներ չունեցողներ.

Կրկնակի չափով հարկվող տնտեսությունների խմբում մացվում են ձայնազրկված և պետական պարտավորությունները չարտամորեն չկատարող տնտեսությունները:

Հարկման յենթակա յեկամուտի աղբյուրներ չունեցող խմբի մեջ մացվում են այն բանավորների, ծառայողների տնտեսությունները, վորոնք ունեն ոժանդակ գյուղական տնտեսություն և աղատվում են գյուղհարկի որենքի 69-ըդ հոդվածի կարգով, ինչպես և այն բանավորների, ծառայողների, արհեստավորների և այլ անձանց տնտեսությունները, վորոնք չունեն գյուղական տնտեսություն և դյուղհարկով չեն հարկվում:

Տնտեսությունները խմբավորելու համար տնտեսության գրքի «խմբակը լսու գյուղհարկի» տողում և ոժանդակ ցուցակներում նշանակվում են խմբերի համարները 1, 2, 3, և այլն:

§ 49. Աշխատավոր մենատնտեսների ու ժանդակի ցուցակները կազմելու ժամանակ, չնչերի, ցանքերի, այգիների այլ գյուղատնտեսական որյեկտների տվյալները արտադրություն գրքից: Շուկայի և վոչ գյուղատնտեսական յեկամուտների տվյալները վերցվում ե այդ յեկամուտների հաշվառման ցուցակներից, շրջանային հարկային հանձնաժողովի կազմից հաստատված դումարներով:

Այն մշակույթները, վորոնց նկատմամբ չի սահմանված պլանային առաջադրանք, հարկումը կատարվում է փառացի ցանքի տարածության համեմատ և այդ տարածությունը ցուցակում գրվում է թի պլանային ցանքի և թե փառացի ցանքի ոյունյակներում:

Ցուցակի «անտանապահություն» բաժինը լրացնելու ժամանակ, հարկումից ազատվող աճը վարոշելու համար անհրաժեշտ է հաշվի առված Յ տարեկանից բարձր յերին ջների, կոռաված Յ տարեկանից բարձր յերին ջների, վոչխարների և այծերի քանակը համեմատել անցյալ տարվա հաշվառման տվյալների հետ:

Ցուցակի «հաշվարկ»-ի և «զեղջ»-ի ըստ ժինները լրացվում են նույն կարգով, վորոնք սահմանված է կողանտեսականների համար:

§ 50. Կուլտային տնտեսությունների ցուցակների «ցանքի տարածություններ»-ի բաժնում լրացվում են միայն «պլանային ցանք»-ի ոյունյակները:

Անհատական կարգով հարկվող տնտեսու-



թյունների գյուղատնտեսությունից ստացած հարկվող յեկամուտները ցույց են տրվում մեկ դումարով:

Կուլակային տնտեսությունների «շուկայի յեկամուտներ» սյունյակը չի լրացվում։ Այդպիսով այդ տնտեսությունների յեկամուտները գրվում են միայն հետեւյալ սյունյակներում՝ 1) «բնդամենը գյուղատնտեսությունից, հարկվող յեկամուտը» 2) «վոչ գյուղատնտեսական վաստակներից հարկվող յեկամուտը» և 3) «հարկվող յեկամուտը բոլոր աղբյուրներից»։

«1935 թ. գրույքը» սյունյակի զումարը պետք է ամբողջովին համապատասխանի «Հաշվարկված ե» սյունյակի գումարին քանի վորկուլակային տնտեսություններին հարկերից զեղչ չի տրվում։

ԽՍՀՄ Ֆինանսական Ժողովրդական կոմիսար

ԽՍՀՄ մասսայական վճարումների սեկտորի ղեկավար ՏԱՄԱՐԻԿԻՆ



336
Հ-99